եւ Սուրբ Դռան բացման կապակցութեամբ, հօր ուղեկցութեամբ ուխտի է մեկնում Հռոմ եւ այդ առիթով այցելում նաեւ Վենետիկ՝ Ս. Ղազար։ Թովմաճանեանների բարեպաշտ ընտանիքը Մխիթարեանների հետ սերտ կապեր ունէր դեռ Կ. Պոլսից, ուր հովուական առաքելութեամբ գտնուող վարդապետները նրանց ընտանիքի մշտական բարեկամներն էին։ Փաստաթղթերի վկայութեամբ, այս տարիներից սկսած նրանց ընտանիքում քննարկւում էր իրենց որդուն Ս. Ղազար ուսման ուղարկելու հարցը։

Այս խօսակցութիւններին Մխիթարեան վարդապետների նամակներից տեղեկացուել է նաեւ Մխիթար Սեբաստացին, որ անձամբ եւ ամենայն ըծախնդրութեամբ հետեւում էր նորընծաների հաւաքմանը, անընդհատ խորհուրդներ էր տալիս Պոլսում եւ Արեւմտեան Հայաստանում գտնուող վարդապետներին, թէ ինչ սկզբունքներով պէտք է ընտրուեն նրանք։ Իր 1731 թ. ապրիլի 26-ի նամակում ուղղուած Հ. Պողոսին (Կ. Պոլիս) նա պնդում է, որ նորընծաների թեկնածուները լինեն «յարմարք, այսինքն մարմնով առողջ, սրամիտք եւ հեզք։ Որոնելի է զորրս եւ զաղքատս, միայն թէ իցեն ընտիրք»։ *Աբբահայրն այնուհետեւ շարունակում է.* «Մահտեսի Աբրահամի տղան մի՛ դնիցի ի թիւն։ Քանզի նա *միածին է հօրն*, եւ ընդ նմին թէեւ գայցէ՝ ընդ նմին դառնայ, զի ոչ ինքն կարէ տեւել, եւ ոչ հայրն կարէ տանիլ զի թողցէ զմիակ որդին եւ դարձցի. թէեւ այժմ ասիցէ տղան թէ մնամ, եւ հայրն ասիցէ՝ թէ թողում, եւ եթէ իբրու առժամանակեայ վասն աշխարհական լինելոյ կամիցի թողուլ առ մեզ. այս մեզ ոչ յարմարի, եւ ոչ զոյ մեզ վասն այսպիսեացս տեղի»[4]։ *Մխիթար Սեբաստացին սկզբնապէս դէմ լինելով Յովհաննէս Թովմաճանեանի կրօնաւորմանը, ի վերջոյ, տեղի տալով ծնողների մօտ երկամեայ թախանձանքներին ու դիմումներին, արդէն 1732 թ. սեպտեմբեր 2-ին, Հ. Պողոսին գրած իր նամակում նախկինի պէս կտրուկ չէր.* «Վասն հաճի Աբրա-

---

4 Նամականի Մխիթարայ Աբբայի, *[Ս. Ղազար, ա. թ.], հտ. Բ, թիւ 412։ Նոյն օրն իսկ Հ. Յակոբ Բուզայեանին գրած նամակում Մխիթարը, նորից անդրադառնալով Պոլսից եկող աշակերտներին աւելացնում է.* «Հ. Թոմաս Վարդապետն գրեալ է, թէ հաճի Աբրահամն գալոց է որդւովն, եւ զորդին դնելոց է 'ի վանքն եւ այլն։ Զորդի նորին ոչ պարտիս դնել 'ի թիւս պատանեացս, *զի այն նորա միակի որդի է.* եւ ոչ կարէ տեւել. նաեւ իսկ հայրն ոչ կարէ տանիլ՝ զի թողցէ զմիակ որդին։ Եւ եթէ առժամանակեայ դիցէ, այս մեզ ոչ յարմարի եւ վասն այնպիսեաց չունիմք զտեղի եւն. ուրեմն այն 'ի մէջ թուոց ոչ է դասելի» (*Նոյն տեղում, թիւ 413*)։